

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 6(17/18)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի 14.05.2018թ.կայացած նիստի

խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 24-ը :

Օրակարգ`

- 1. Տեղեկատվություն 2017-2018 ուս.տարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված ոսցիոլոգիական հարցման տվյալների մասին:**

Ձեկ.` ամբիոնների վարիչներ

- 2. Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի, Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնների վարիչների հաշվետվությունները 2017/2018 ուսումնական տարում ամբիոններում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ:**

Ձեկ.` ամբիոնների վարիչներ

- 3. Առկա ուսուցմամբ ասպիրանտների հաշվետվությունները 2017/2018 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ասպիրանտուրայում ուսումը շարունակելու համար ատեստավորման հարցը:**

- 4. Ընթացիկ հարցեր**

Օրակարգի 1 - ին հարցի կապակցությամբ..

Լսեցին - Ամբիոնների վարիչների տեղեկատվությունը 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ ուսանողների շրջանում անցկացված ոսցիոլոգիական հարցման տվյալների մասին: Նրանք ըստ համապատասխան ամբիոնների ներկայացրին դասախոսների ստացած գնահատականներ և ամբիոնային միջին գնահատականը:

Արտատայտվեցին.- Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ.Ներկարարյանը ներկայացրեց ֆակուլտետային միջին գնահատականը` 4,71, ինչպես նաև դեկանատի գնահատականը` 4,72, որոնք համալսարանական մասշտաբով բավականին լավ արդյունքներ են:

Որոշեցին.- Հաղորդումն ընդունել ի գտություն:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին- Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի վարիչ ֆ.մ.գ.թ. Գ.Բ. Ալավերդյանի հաշվետվությունը 2017-2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ: Ամբիոնի վահիչը ներկայացրեց համապատասխան ամբիոնում մեկ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ըստ ուսումնամեթոդական և գիտական ոլորտների: Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ.Հարությունյանի հաշվետվությունը 2017-2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների վերաբերյալ: Ամբիոնի վահիչը ներկայացրեց համապատասխան ամբիոնում մեկ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ըստ ուսումնամեթոդական և գիտական ոլորտների:

Որոշեցին.- Հավանություն տալ Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ Գ.Բ.Ալավերդյանի հաշվետվությանը և 2017/2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները գնահատել բավարար: Հավանություն տալ Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ.Հարությունյանի հաշվետվությունը և 2017/2018 ուսումնական տարում ամբիոնում կատարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները գնահատել բավարար:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ Սրամ Հովհաննիսյանի (*գիտ. ղեկ.*՝ պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյան**) հաշվետվությունը ասպիրանտական առաջին տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին - Ընթերցվեց ասպիրանտի գիտական ղեկավար, պրոֆեսոր Վ.Շ. Մելիքյանի կարծիքը, ըստ որի ասպիրանտը կատարել է ասպիրանտական առաջին

տարվա համար պլանով նախատեսված աշխատանքները: Մասնակցել է կրեդիտային համակարգով նախատեսված դասընթացներին, և ստացել է անհրաժեշտ կրեդիտներ: Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

Որոշեցին - Ասպիրանտ **Արամ Հովհաննիսյանի** ասպիրանտական առաջին տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

Լսեցին - Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի ասպիրանտ **Գևորգ Շահխաթունիի (գիտ. ղեկ.՝ Վ.Մ. Առաքելյան)** հաշվետվությունը ասպիրանտական երկրորդ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին - Ասպիրանտի գիտական ղեկավար, Վ.Մ. Առաքելյանը հայտնեց, որ ասպիրանտը կատարել է երկրորդ տարում պլանավորած աշխատանքները: Ունի անհրաժեշտ կրեդիտներ: Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

Որոշեցին - Ասպիրանտ **Գևորգ Շահխաթունիի** ասպիրանտական երկրորդ տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

Լսեցին - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ **Անդրանիկ Հայրապետյանի (գիտ. ղեկ.՝ պրոֆեսոր Վ.Շ. Մելիքյան)** հաշվետվությունը ասպիրանտական երկրորդ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին - Ընթերցվեց ասպիրանտի գիտական ղեկավար, պրոֆեսոր Վ.Շ. Մելիքյանի կարծիքը, ըստ որի ասպիրանտը կատարել է ասպիրանտական երկրորդ տարվա համար պլանով նախատեսված աշխատանքները: Մասնակցել է կրեդիտային

համակարգով նախատեսված դասընթացներին, և ստացել է անհրաժեշտ կրեդիտներ:
Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

Որոշեցին- Ասպիրանտ **Անդրանիկ Հայրապետյանի** ասպիրանտական երկրորդ տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

Լսեցին - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ **Արա Մկրտչյանի** (*գիտ. դեկ.*՝ պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյան**) հաշվետվությունը ասպիրանտական երկրորդ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին - Ընթերցվեց ասպիրանտի գիտական ղեկավար, պրոֆեսոր Վ.Շ. Մելիքյանի կարծիքը, ըստ որի ասպիրանտը կատարել է ասպիրանտական երկրորդ տարվա համար պլանով նախատեսված աշխատանքները: Մասնակցել է կրեդիտային համակարգով նախատեսված դասընթացներին, և ստացել է անհրաժեշտ կրեդիտներ:
Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

Որոշեցին - Ասպիրանտ **Արա Մկրտչյանի** ասպիրանտական երկրորդ տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

Լսեցին - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ **Թորգոմ Եզեկյանի** (*գիտ. դեկ.*՝ պրոֆեսոր **Խ.Վ. Ներկարարյան**) հաշվետվությունը ասպիրանտական երկրորդ տարում կատարած աշխատանքների վերաբերյալ և ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար ատեստավորման հարցը:

Արտահայտվեցին – Ասպիրանտի գիտական ղեկավար պրոֆեսոր, Խ.Վ. Ներկարարյանը հայտնեց, որ ասպիրանտը կատարել է երկրորդ տարում պլանավորած

աշխատանքները: Ունի անհրաժեշտ կրեդիտներ և տպագրված հոդվածներ:
Առաջարկվեց ասպիրանտին ատեստավորել:

Որոշեցին - Ասպիրանտ **Թորգոմ Եզեկյանի** ասպիրանտական երկրորդ տարվա աշխատանքները համարել բավարար և նրան ատեստավորել ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

Օրակարգի ընթացիկ հարցերում

Լսեցին- Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության» ամբիոնի դոցենտ ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր **Արսեն Ժորայի Բաբաջանյանին** պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու հարցը:

Արտահայտվեցին.- Ֆակուլտետի դեկան ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Խ.Վ.Ներկարարյանը ծանոթացրեց **Ա.Ժ.Բաբաջանյանի** ներկայացրած փաստաթղթերը և հայտնեց, որ մրցութային հանձնաժողովը քննարկել է նշված հարցը և գտնում է, որ այն լիովին համապատասխանում է պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ «ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» ՀՀ կառավարության որոշման պահանջներին:

Նշվեց, որ Ա.Բաբաջանյանը կայացած գիտնական է, ունի ավելի քան 22 տարվա գիտական և 18 տարվա մանկավարժական փորձ: Ա.Բաբաջանյանը 74 գիտական աշխատանքների հեղինակ է: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն: Դոկտորական թեզի պաշտպանությունից հետո Ա.Բաբաջանյանը ունի հրատարակված մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, իսկ արտասահմանյան ամսագրերում տպագրվել են 65 գիտական հոդվածներ:

Որոշեցին- Հիմնվելով բաց քվեարկության արդյունքների վրա՝ ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի «ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության» ամբիոնի ղոցենտ, ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր **Արսեն Ժորայի Բաբաջանյանին** դրական կարծիքով ներկայացնել պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար: Խորհրդի 24 ներկա անդամներից կողմ քվեարկեցին 24-ը:

Լսեցին. ԳՊԿ-ի կողմից հայտարարած գիտական և գիտատեխնիկական գործունեության բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար ռադիոֆիզիկայի ֆակուլտետի Կ/Հ սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Վարդան Հարությունյանի գիտական աշխատանքների նանոտեխնոլոգիաների բնագավառի հետ համապատասխանության հարցը:

Որոշեցին. Վարդան Հարությունյանի գիտական տպագրությունները հիմնականում պատկանում են նանոտեխնոլոգիաների բնագավառին:

Լսեցին. ԳՊԿ-ի կողմից հայտարարած Աջակցության ծրագիրն մրցույթին մասնակցելու համար ռադիոֆիզիկայի ֆակուլտետի Կ/Հ ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի երկրորդ կուրսի ասպիրանտ Գ.Շահիսաթունու ներկայացրած «Կիսահաղորդչային կառուցվածքների հետազոտումը իմպեդանսային սպեկտրասկոպիայի եղանակով» թեմայով հայտի երաշխավորման հարցը:

Որոշեցին. Հաշվի առնելով թեմայի արդիականությունը և այդ բնագավառում Գ.Շահիսաթունու ունեցած ձեռքբերումները՝ ներկայացված «**Կիսահաղորդչային կառուցվածքների հետազոտումը իմպեդանսային սպեկտրասկոպիայի եղանակով**» թեմայով հայտը երաշխավորել դրական կարծիքով:

Օրակարգը սպառված է:

*Խորհրդի նախագահ,
Ֆ.Ա.Գ.Ք. պրոֆեսոր*

Խ.Վ.Ներկարարյան

Գիտքարտուղար

Յ. Ա. Շահինյան